ՏԱՂԱՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԲԱՔՎԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ՕՐԳԱՆԸ

Ս. Դ. ԱՎԱԴՅԱՆ

Բաքվի կոմունայի հաստատման և նրա ձեռնարկած միջոցառումների իրականացման համար մղված պայքարում իր արժանի ավանդն է ներդրել նաև բոլշևիկյան մամուլը։ Հատկապես արժանի է հիշատակության «Бакинский рабочий», «Հումմեթ», «Սոցիալ-դեմոկրատ», «Известия Бакинского Совета», «Տեղեկատու», «Բարը շուրասը էխբարի» և մյուս թերթերի դերը մասսաների ռևոլյուցիոն գիտակցությունը բարձրացնելու, նրանց մարքս-լենինյան գաղափարներով զինելու, հակառևոլյուցիոն ուժերին հակահարված տալու և Սովետական իշխանությունը ամրապնդելու ուղղությամբ։

Վաղուց ժամանակն է, որ մեր հետազոտողները վեր հանեն Բաքվի բոլշևիկյան մամուլի հերոսական պատմությունը, ցույց տան նրա դերը Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում։ Ներկա հոդվածում մենք համառոտակի կանգ կառնենք Բաքվի կոմունայի միայն հայատառ օրգանի՝ «Տեղեկատուի» գործունեության լուսաբանման վրա։

* * *

Հայերեն «Տեղեկատու» թերթը՝ Բաքվի Բանվորների, Զինվորների, Նավաստիների դեպուտատների սովետի մարտական օրգանը, ընդամենը երեք ու կես ամիսների պատմություն ունի։ Նրա առաջին համարը լույս է տեսել 1918 թ. ապրիլի 16-ին, իսկ վերջինը՝ հուլիսի 31-ին։ Հրատարակվել է ընդամենը 84 համար։

«Տեղեկատուի» առաջին երեք համարները լույս են տեսել երկու էջով, իսկ մյուսները՝ չորս էջով, ընդ որում 4-ից մինչև 10-րդ համարների երկու էջերը հրատարակվում էին հայերեն (առաջին և երրորդ էջեր), երկուսը՝ ադրբեջաներեն։ Միայն ապրիլի 26-ից են ստեղծվում երկու ինքնուրույն խմբագրություններ։

«Տեղեկատուն» լույս տեսնել սկսեց այն օրերին, երբ վճռվում էր ոչ միայն Բաքվի, այլև ամբողջ Անդրկովկասի բախտը։ Բնութագրելով այդ ժամանակաշրջանը, թերթը իր հենց առաջին համարի «Մեր խոսքը» առաջնորդող հոդվածում գրում էր.

«Այսքան առաջին անգամ լույս է տեսնում Բաքվի Բանվորական, Զինվորական և Նավաստիների խորհրդի «Տեղեկատուն» հայերեն լեզվով։ Լույս է տեսնում քաղաքացիական կռվի օրերին, երբ կովկասյան դեմոկրատիայի՝ անկախ նրա ազգային պատկանելության փաստից բախտն է վճռվում։ Բանվորական խորհուրդները արդեն վեցերորդ ամիսն է, ինչ փաստորեն իրենց ձեռն են առել իշխանությունը Ռուսաստանում և այս համեմատաբար կարճ ժամանակամիջոցում՝ քաղաքացիական կռվի առաջ բերած մթնոլորտում, կարողացել են իրականացնել մի շարք ռեֆորմներ, որոնց նշանակությունը ազգաբնակչության դեմոկրատական խավերի— բանվորության և գյուղացիության համար ահագին է»։

Այսպիսի պայմաններում առավել անհրաժեշտ է դառնում նաև հայերեն ու ադրբեջաներեն լեզուներով տպագիր օրգանների հրատարակումը։ Մինչև «Տեղեկատուի» լույս տեսնելը Բաքվում, դեռևս 1917 թ. մարտի 30-ից, հրատարակվում էր ռուսերեն «Известия Бакинского Совета» («Բաքվի սովետի տեղեկատու») թերթը, որը լինելով Բաքվի Բանվորների և Զինվորների դեպուտատների նորաստեղծ սովետի ամենօրյա օրգանը, զգալի ծառայություն մատուցեց աշխատավորների ռևոլյուցիոն դաստիարակության գործին։

Առաջին իսկ համարից հայատառ օրգանը սերտ կապ է պահպանում «Известия Бакинского Совета» թերթի հետ։ Այդ կապը արտահայտվում էր մի շարք ձևերով. երկու խմբագրությունների հայ աշխատողները, մասնավորապես Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Ա. Կարինյանը,

Ս. Հովսեփյանը և ուրիշներ, տեսական և պրակտիկ հոդվածներով հանդես էին գալիս և՛ ռուսերեն, և՛ հայերեն թերթերում։

Ջերմ էր «Տեղեկատուի» և ադրբեջաներեն «Բաքր շուրասը Լխբարի» («Բաքվի սովետի տեղեկատու») թերթերի աշխատակիցների բարեկամությունը։ Ականատեսները պատմում են, որ հայերեն և ադրբեջաներեն «Տեղեկատու» թերթերի աշխատողները հաճախ միմյանց հետ խորհրդակցում էին առանձին համարների բովանդակության մասին։ Հայերեն «Տեղեկատուն» որոշ նյութեր թարգմանաբար արտատպում էր ադրբեջաներեն թերթից։ Այսպես, «Բաքր շուրասը Լխբարի» թերթի ակտիվ աշխատակիցներ Զեյնալիի «Կովկասի քաղաքական կյանքը» և Ախունդովի՝ «Ուրախալի երևույթ» վերնագրով հոդվածները լույս են տեսել «Տեղեկատուի» 7, 10, 11, 12 համարներում։

«Տեղեկատուի» անցած ուղին հիշեցնում է «Պրոլետարիատի կոիվ» և «Կոչ-դեվեթ» թերթերի գործունեությունը, թերթեր, որոնք լուրջ ծառայություն են մատուցել Անդրկովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն բարեկամությունը կոփելու գործին։

Հայերեն «Տեղեկատու» թերթը լույս էր տեսնում խմբագրական կոլեգիայի պատասխանատվությամբ։ Հատկապես պետք է ընդգծել Անաստաս Միկոյանի և Հովսեփ Կարախանյանի կատարած աշխատանքը։ Քաջատեղյակ լինելով Վ. Ի. Լենինի ժուռնալիստական գործունեությանը, նրա խմբագրական աշխատանքի մեթոդներին և պրակտիկ, գաղափարական աշխատանք ծավալելով Սա. Շահումյանի հետ, Ա. Միկոյանը ձեռք է բերում հրապարակախոսի և ժուռնալիստի մեծ փորձ։ Նրա գրչին պատկանող ամեն մի հոդված առաջ էր բերում կենդանի հետաքրքրություն և իր ներգործությունն էր ունենում ընթերցողների վրա։ Հովսեփ Կարախանյանը, ճիշտ է, «Տեղեկատուի» պատասխանատու խմբագիրը չէր, սակայն մեծ խանդավառությամբ մասնակցում էր թերթի աշխատանքներին, կազմում նրա առանձին համարները, կապ հաստատում շրջանների հետ, թղթակցական լայն ակտիվ ստեղծում թերթի շուրջը։ Նա հեղինակն է թերթում տպագրված մի շարք կարևոր հոդվածների, որոնք իրենց ուժը չեն կորցրել նույնիսկ այժմ։

«Տեղեկատու» թերթի համարները ձևավորվում էին ժուռնալիստական բարձր ճաշակով, գրավում ընթերցողների ուշադրությունը։ Հոդվածները գրվում էին պարզ, հասկանալի լեզվով, կոնկրետ փաստերի հիման վրա։ Թերթում տպագրվում էին հոդվածներ, թղթակցություններ, ինֆորմացիաներ։ Լուրջ ուշադրություն էր դարձվում նյութերի և նրանց վերնագրերի ընտրության, ինչպես նաև առանձին էջերի ձևավորման։

Տպագրվող նյութերում օգտագործվում էին կենդանի ու գրավոր խոսքի արտահայտիչ հնարանները՝ ժողովրդի մեջ լայն ճանաչում գտած ասացվածքներ, թևավոր խոսքեր։ Դրանց շնորհիվ նյութերը ավելի իմաստալից էին դառնում։

Որ գրեթե բոլոր համարներում «Տեղեկատուն» օգտագործում էր տարբեր ժանրերի նյութեր (հոդվածներ, ինֆորմացիաներ, նամակներ, բանաստեղծություններ, քաղաքական ակնարկներ և այլն)։ Դրանք զետեղվում էին «Ռադիոդրեր», «Ռուսաստան», «Արտասահման», «Բանվորական կյանք», «Գյուղացիական կյանք», «Պարենավորում», «Նամակ խմբագրությանը», «Մամուլ» և այլ վերտառությունների տակ։

Թերթը իր շուրջն էր համախմբել բանվոր թղթակիցների լայն ակտիվ։

Բաքվում ստեղծված բարդ իրադրությունը անհետաձգելի խնդիրներ է դնում թերթի առջև։ Ամենից առաջ թերթը կոչված էր օգնելու բոլշևիկյան կազմակերպություններին՝ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ պայքարելու, աշխատավորների գիտակցությունը բարձրացնելու, նրանց նորաստեղծ Սովետական իշխանության շուրջը համախմբելու և ներքին ու արտաքին թշնամիներին հակահարված տալու համար։

«Տեղեկատուն» պատվով է կատարում կոլեկտիվ ագիտատորի, պրոպագանդիստի և կազմակերպչի իր դերը, բոլշևիկյան ճշմարտացի խոսքը հասցնելով աշխատավորական լայն զանգվածներին։

Կարդալով թերթի համարները, մեզ համար ավելի պարզ է դառնում այն դժվարին, մարտունակով լի ուղին, որ անցել են Բաքվի բոլշևիկները Սովետական իշխանության համար մղված պայքարում։ Բաքվում Սովետական իշխանություն հաստատելու առաջին իսկ օրերից աշխատավորների մեծ մասը կանգնում է սովետի կողմը։ Հանձին սովետի նրանք տեսնում էին բարձրագույն այն օրգանը, որը կոչված է պաշտպանելու աշխատավորների շահերը։ Այդ մասին «Տեղեկատուի» «Խորհուրդների իշխանության հաղթության գրավականը» հոդվածում կարդում ենք. «Ներկայումս մեզ հետ են՝ իր ճնշող մեծամասնությամբ հայ չքավոր գյուղացիությունը և մանր-բուրժուական լայն մասսաները, մեզ հետ են վրաց ամենաաղքատ գյուղացիները, մեզ հետ են թուրք բանվորների ու գյուղացիության մի փոքր, բայց գիտակից մասը։ Մեզ հետ են,

որովհետև նրանց ազատության, հող ստանալու հարցի հաջող լուծման գրավականը խորհուրդների հաղթանակն է»։

Բաքվի պարտիական կազմակերպությունը և Բանվորների, Զինվորների, Նավաստիների դեպուտատների սովետը լուրջ նախապատրաստություն են տեսնում Ժողովրդական կոմիսարների սովետ ստեղծելու ուղղությամբ։ Ինչպես Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան բոլոր թերթերը, այնպես էլ «Տեղեկատուն» հաղորդագրություն են հրապարակում ՌԿՊ (բոլշևիկների) Բաքվի կազմակերպության կոնֆերանսի և Բաքսովետի նիստի մասին։ Վերջիններս հրավիրելու նպատակն էր՝ կազմել Ժողովրդական կոմիսարների սովետ և միջոցներ ձեռնարկել Բաքվում Սովետական իշխանությունն ամրապնդելու համար։

1918 թ. ապրիլի 25-ին Բաքվի սովետի որոշմամբ ստեղծվում է «Ժողովրդական կոմիսարների Բաքվի սովետը»։ Աշխատավորներն անհուն ցնծությամբ են ընդունում նրա ստեղծումը։ Այդ առթիվ, ինչպես հաղորդում է թերթը, Ադրբեջանի շատ շրջաններում գումարվում են միտինգներ ու ժողովներ։ Այսպես օրինակ, Լենքորանի աշխատավորների մայիսմեկյան միտինգի բանաձևը վերջանում էր «Կեցցե Բաքվի և նրա շրջանների Ժողովրդական կոմիսարների սովետը» լոզունգով։

«Տեղեկատուն» հրապարակում է Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետի կազմը և նրա անդրանիկ դեկլարացիան, որի տակ իրենց ստորագրությունն էին դրել Ժողկոմսովետի նախագահ և Արտաքին գործերի կոմիսար Ստ. Շահումյանը, Ռազմա-ծովային գործերի կոմիսար Դ. Կորգանովը, Ժողովրդական տնտեսության կոմիսար Ի. Ֆիոլետովը, Արդարադատության կոմիսար Ա. Կարինյանը, Ներքին գործերի կոմիսար Ա. Ջափարիձեն, Քաղաքային տնտեսության կոմիսար Ն. Նարիմանովը և ուրիշներ։ Դեկլարացիայում նշված էին Ժողովրդական կոմիսարների սովետի խնդիրները և դրանց իրականացման կարևորությունը տվյալ ընթացիկ մոմենտում։

Դեկլարացիան վերջանում էր հետևյալ խոսքերով.

«Ժողովրդական կոմիսարների Բաքվի սովետը ձեռնարկում է իր աշխատանքին՝ վստահ բանվորական մասսաների լիուլի աջակցության ու նրանց կենդանի, ստեղծագործող ինքնագործունեության վրա»։

Թերթը պարզաբանում ու դրվատում էր հայ, ռուս, վրացի, ադրբեջանցի, քուրդ և մյուս ազգություններին պատկանող աշխատավորների եղբայրական համագործակցությունն ու համատեղ պայքարը՝ Բաքվի Ժողկոմսովետի սոցիալիստական միջոցառումները կենսագործելու համար։ Բոլշևիկյան թերթերը, այդ թվում և հայերեն «Տեղեկատուն», հրապարակում էին Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետի դեկրետները՝ դպրոցները մզկիթներից և եկեղեցիներից բաժանելու, կրթության գործում ունեոր դասակարգի արտոնությունները վերացնելու, աշխատավորների ձրի ուսումը գործողության մեջ դնելու, նոր դրամանիշներ բաց թողնելու, կաշառակերության և պաշտոնը չարաշահելու դեմ պայքարելու, բամբակի մասնավոր գործարքը արգելելու, բանկերը, նավթային արդյունաբերությունը, հողի ընդերքը, Թաղիևի ձկնորսարանները, կասպիական առևտրական նավատորմը ազգայնացնելու, Անդրկովկասի և Դաղստանի մարզի հողերը հանրայնացնելու, Կարմիր Բանակ և ժողովրդական դատարան կազմակերպելու, ծովային գումարտակ ստեղծելու և կարևոր այլ հարցերի մասին։

Սակայն թերթը չէր սահմանափակվում դեկրետների սոսկ հրապարակմամբ։ Տպագրելով այդ դեկրետները, «Տեղեկատուն» հոդվածների և այլ նյութերի միջոցով պարզաբանում էր Ժողկոմսովետի այդ միջոցառումների կենսական նշանակությունը աշխատավորների համար, վերջիններիս մոբիլիզացնում նպաստելու դրանց կենսագործմանը։

Թերթը լայնորեն լուսաբանում է նավթարդյունաբերության ազգայնացման կարևորությունը։ Նավթարդյունաբերության ազգայնացման նախաձեռնողը Վ. Ի. Լենինն էր։ 1918 թ. մայիսի 28-ին ՌՍՖՍՌ Ժողովրդական կոմիսարների սովետը որոշում է կայացնում նավթարդյունաբերությունը ազգայնացնելու մասին։ Այդ որոշման համաձայն Բաքվի Ժողկոմսովետը հունիսի 2-ին դեկրետ է հրապարակում Ադրբեջանի նավթային ձեռնարկությունները Բաքսովետի իրավասության տակ անցնելու վերաբերյալ։

Հունիսի 4-ի համարում տպագրվում է Ի. Վ. Ստալինի հեռագիրը՝ նավթարդյունաբերության ազգայնացումը Ժողովրդական կոմիսարների սովետի կողմից հաստատելու և ամբողջ գործը նավթային գլխավոր կոմիտեին հանձնելու մասին։ Բացի դրանից, «Տեղեկատուն» նույն համարում հատուկ առաջնորդող է նվիրում կարևոր այդ հարցին՝ «Նավթային արդյունաբերության նացիոնալիզացիան» վերնագրով։

«...Ընկեր բանվորներն,— ասված էր այդ առաջնորդողում,— այսուհետև պետք է կրկնապատկված եռանդով աշխատեն, պետք է օգտագործեն՝ արտադրվող նավթի քանակն ավելաց-

նելու համար յուրաքանչյուր բոպեն, յուրաքանչյուր վայրկյանը՝ թաչ գիտակցելով, որ այն բոլորը, ինչ որ այժմ կարտադրեն իրենք, իրենց սեփականությունն է լինելու և նավթի վաճառումից գոյացած դրամի ավելորդը պետք է գործադրվի բանվորության և աշխատավորության կարիքները բավարարելու համար»։

Դառնալով նավթահանքերի իսկական տերը, բանվորները պայքար են ծավալում ավելի շատ նավթամթերքներ արտադրելու համար։ Նրանք խորը գիտակցում են, որ Բաքվի նավթը անհրաժեշտ է ոչ միայն Անդրկովկասին, այլև ամբողջ երկրին։ Նավթագործների եռանդուն աշխատանքի մասին են վկայում թվերը. եթե 1918 թ. մայիսին հանվում է 14,4 միլիոն փութ նավթ, ապա նավթային արդյունաբերության ազգայնացումից հետո, միայն հուլիսին, Ռուսաստան է ուղարկվում 30 միլիոն փութ հեղուկ վառելանյութ։

«Տեղեկատուն» սիստեմատիկաբար լուսաբանում է ոչ միայն նավթարդյունաբերության ազգայնացման, այլև մյուս դեկրետների կենսագործման համար Բաքվի բազմազգ աշխատավորների մղած պայքարը։

Թերթը կարևոր տեղ էր հատկացնում հակառևոլյուցիայի դեմ մղվող պայքարին։ Նա մերկացնում էր Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական քաղաքականությունը։ Այդ տեսակետից ուշագրավ է Ա. Միկոյանի «Տարած հաղթությունը և հերթական խնդիրները» հոդվածը։ «Կռիվը հակահեղափոխության դեմ,— նշված է հոդվածում,— դեռևս չի վերջացած, հակահեղափոխության գլխավոր բները դեռևս չեն ոչնչացված. դեռ նրա գինված բանդաները բոլորը չեն ջարդված և ցրված»։ Եվ հեղինակը հետևցնում է, որ պետք է ուժեղացնել պայքարը հակառևոլյուցիայի դեմ, աշխատավորների կուտակի թշնամիների դեմ։ «Տեղեկատուն» քննադատության սլաքը ուղղում էր Անդրկովկասյան Սեյմի հակասովետական քաղաքականության դեմ, անսրգանքի սյունին էր գամում այդ կեղծ պառլամենտը, որի առաջին գործը եղավ Անդրկովկասի անջատելը Սովետական Ռուսաստանից։ «Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից» առաջնորդող հոդվածում, որը տպագրված է ապրիլի 30-ի համարում, թերթը այդ մասին գրում էր. «Այսպիսով այն, ինչ որ իրրև շշուկ պտտում էր մեր քաղաքում, այն, ինչին մեր միտքը չէր ուզում հավատալ՝ կատարվեց»։

«Տեղեկատուն» փաստական նյութերի հիման վրա մերկացնում էր անդրկովկասյան «կառավարողների» հակառևոլյուցիոն դեմքը։ Մայիսի 3-ի համարի՝ «Հեղափոխության դավաճանները» հոդվածում թերթը սուր ծաղրի է ենթարկում բեգական-մենշևիկյան-դաշնակցական Սեյմի անդամներից մեկին՝ ներքին գործերի մինիստր Ռամիշվիլուն, որը այդ օրերին հակասովետական բովանդակությամբ մի շրջաբերական-հեռագիր էր ուղարկել նահանգական կոմիսարներին, որտեղ լկտիաբար փորձում էր Անդրկովկասի անջատվելը Ռուսաստանից «բացատրել» իբրև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հետևանք։ Թերթը հերքում է այդ շրջաբերական-հեռագրի նաև այն կեղծիքը, որ իբր թե «Անդրկովկասյան նոր կառավարությունը որոշել է եռանդուն կռիվ մղել ընդդեմ անարխիայի, ճնշել այն, որտեղից էլ որ նա գալիս լինի, և վերջ տալ բռնկված ազգամիջյան կռվին...»։ Դատապարտելով սեյմականների վարքագիծը, թերթը ցույց է տալիս, որ մինիստր Ռամիշվիլու այդ շրջաբերականը ամենից առաջ նպատակ ունի թյուրիմացության մեջ գցելու դյուրահավատներին և Սեյմը ներկայացնելու իբրև «ժողովրդասեր կառավարություն»։

Սեյմի հայրենադավ քաղաքականության մերկացմանն էր ուղղված նաև մայիսի 10-ի խմբագրական հոդվածը՝ «Տաճկական վտանգը» վերնագրով։ Թերթը նշում է, որ Սեյմի հրամանով տաճիկներին հանձնվել է Կարսը, և տեղի բնակիչները՝ տուն-տեղ թողած, տասնյակ հազար ընտանիքներով շարժվում են դեպի Ղազախի և Լոռու գավառները։ Խմբագրությունը գրում էր որ «մարդարև չպետք է լինել զուշակելու համար, որ Տաճկաստանը կանգ չի առնի Կարսում, այլ առաջ կշարժի իր «հաղթական» բանակները դեպի առաջ՝ գրավելու Թիֆլիսը, Բաքուն և այլն»։ Բաքվի սովետի օրգանը չի կորցնում հույսը հաղթանակի նկատմամբ։ Նա մասսաներին է դիմում ոգևորիչ խոսքերով, որ հաղթանակը ձեռք է բերվում զոհողությունների գնով, մեծ դժվարությամբ և որ ապագային պետք է նայել հավատով և վստահությամբ։ «...Բայց գիտակցված վտանգի մեծությունը,— գրում է թերթը,— չպետք է մեզ լքում պատճառի, այլ պետք է լարի մեր կամքը դիմագրավելու մեզ սպառնացող վտանգը, հաղթելու թշնամուն և ապահովելու մեր գեղեցիկ Կովկասի կուլտուրական խաղաղ զարգացումը»։

Անդրադառնալով Սեյմի կորստաբեր արտաքին քաղաքականության, թերթը նշում էր. «անջատելով Անդրկովկասը Ռուսաստանի խորհրդային հանրապետությունից, ստեղծելով իրական վտանգ կովկասյան դեմոկրատիայի խաղաղ զարգացման համար, Սեյմը ոչ միայն չհասավ իր նպատակին, ոչ միայն չկարողացավ պահպանել Անդրկովկասի համար այն հողամասերը, որ պետք է անցնեին Տաճկաստանին, այլև ստեղծեց խիստ նպաստավոր պայմաններ տաճկական

կառավարության համար՝ իր խնամակալության ներքո առնելու ամբողջ Անդրկովկասը»։ Այս միտքը թերթը արտահայտում է «Անկախացած Անդրկովկասի կառավարության առաջին քայլերը» հոդվածում։

Սովետների հաջողությունները Բաքվում և Ադրբեջանի մի շարք շրջաններում տագնապ են առաջացնում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամիների շրջանում։ Հակառևոլյուցիայի ներքին ուժերը. հատկապես մենշևիկները, աջ էսեռները, մուսավաթականները և դաշնակները. թշնամական բլոկ կազմած՝ ուժեղացնում են քայքայիչ աշխատանքը սովետների դեմ։

Պարենավորման վիճակը Բաքվում գնալով վատանում էր։ Հաց գրեթե չկար։ Պարենավորման ճգնաժամի սուր պահին հակառևոլյուցիայի մութ ուժերը սրում են պայքարը Բաքվի սովետի դեմ։ Մայիսի 18-ի համարում «Տեղեկատուն» նշում էր, որ այդ ուժերը բանեցնում են իրենց սիրած ստոր ձևը. ցանկանում են պարենավորման դժվարությունները օգտագործել սովետական կարգերի դեմ։ «Այդ ամեն չափ կորցրած հակահեղափոխական արկածախնդիր ասպետները,— գրում է «Տեղեկատուն»,— հանդգնում են մինչև իսկ քաղաքացիական կռվի առաջ գալու հանգամանքները վերագրել Բաքվի խորհրդին և նրան համարել թափված բանվորական թանկագին արյան հանցապարտը»։

Ծառանալով այդ պրովոկացիայի դեմ, թերթը աշխատավորական լայն զանգվածներին բացատրում է, որ պարենավորման ճգնաժամը ստեղծված չէ Բաքսովետի կամքով, ընդհակառակը. Ժողկոմսովետը ամեն միջոց ձեռնարկում է շուտափույտ կերպով լիկվիդացնելու այն։

Պարենավորման հարցը առավել ծանր էր դառնում Կովկասի բոլոր կողմերից Բաքու եկող մեծ թվով գաղթականների հետևանքով։ Անհրաժեշտ էր փրկել այդ անտուն, անտեր մնացած ծերերի, կանանց և անչափահաս երեխաների կյանքը։ Այդ նպատակով Բաքվի Բանվորների, Զինվորների և Նավաստիների դեպուտատների սովետի գործադիր կոմիտեին կից կազմվում է գաղթականների խնամակալության հանձնաժողով։ Թերթը տպագրում է այդ հանձնաժողովի կոչը ուղղված բոլոր քաղաքացիներին։ Կոչում մասնավորապես ասվում է, թե ինչ պետք է անել կյանքը ամեն մի անակնկալից փրկելու համար։

Ամռանը, օգտվելով Բաքվի ծանր վիճակից, ներքին հակառևոլյուցիան ամեն կերպ օժանդակում է գերմանա-թուրքական, անգլիական և մյուս զավթիչներին՝ իրականացնելու իրենց պլանները՝ տապալելու կոմունան և գրավելու Բաքուն։ Բաքվի փառապանծ բոլշևիկները, Ստ. Շահումյանի գլխավորությամբ, արտակարգ այդ ծանր պայմաններում չեն վհատվում և ձեռնարկում են բոլոր միջոցները՝ կոմունան պաշտպանելու համար։

Թերթը տպագրում է Լենինի, Սվերդլովի, Ստալինի և մյուս ականավոր գործիչների հեռագրերը Ստ. Շահումյանին՝ Բաքվի դրության մասին անհապաղ տեղեկացնելու վերաբերյալ։ Սովետական Ռուսաստանը ջանում է ամեն կերպ օգնել Բաքվի կոմունային։ Ռուսաստանի օգնության մասին թերթը հատուկ հոդված է նվիրում։ «Հեռու չէ այն պայծառ օրը,— ասված է այդ հոդվածում,— երբ անդրկովկասյան աշխատավորությունը Ռուսաստանի հզոր աջակցությամբ ֆմաքրի մեր երկիրը հակահեղափոխական բանդաներից և գերմանական ավազակներից և կսկսի քայլել դեպի լավագույն սոցիալիստական կարգեր, երբ այլևս գոյություն չեն ունենա ոչ բռնություն և ոչ պատերազմներ և ամեն մարդ տերը կդառնա իր արդար վաստակին»։

«Տեղեկատուի» ճշմարտացի խոսքերը թափանցում են բանվորների, գյուղացիների, զինվորների, նավաստիների գիտակցության մեջ և նրանց նոր ուժ ու եռանդ ներշնչում՝ մինչև վերջ պայքարելու համար։ Ուշագրավ է հունիսի 26-ի համարում տպագրված հոդվածը, որի վերնագիրը ուղղակի մի կոչ է. «Չպետք է քնել»։ Հոդվածի հեղինակը՝ Գ. Ղազարյանը ստեղծված վտանգը պատկերավոր արտահայտում էր այսպես. «Ռուսական ազատության նավը կանգնած է փոթորկված ծովում և կատաղած ալիքները ծառացած մոտենում են նրան՝ այն խորտակելու նպատակով։ Բայց պետք է փշրենք այդ ալիքները և ազատության նավը անվնաս դուրս հանենք լուսավոր ու ծաղկազարդ ափերը...»։

Թոհուբոհի այդ շրջանում հակառևոլյուցիոն ուժերը դիմում են նաև բոլշևիկյան գործիչների նկատմամբ անհատական տեռորի ստոր մեթոդին։ Թերթը հաղորդումներ է տալիս Պետրոգրադում Վոլոդարսկու և ուրիշների սպանության մասին։

Անհատական տեռոր է սկսվում նաև Ադրբեջանում։ «Ընկեր Իսրայելը սպանված» մահախոսականում ասվում է, որ ազատության այս ճանապարհին ընկնում են բոցաշունչ ռևոլյուցիոներներ, որոնց կյանքը թանկ է պրոլետարիատի համար։ Ահա այդ կյանքերից մեկը Իսրայելն է, որը զոհ է գնում Քյուրդամիրի քաղաքացիական կռվում։

Տեռորիստների այդ զզվելի արարքները Գ. Ղազարյանն անվանում է «Մահամերձի վերջին ճիգեր»։ Այդ վերնագրի տակ հեղինակը նշում է, որ բոլշևիզմի արմատները շատ խորն են և ոչ մի ուժ չի կարող ոչնչացնել դրանք։

Բաքվի վիճակը գնալով կրիտիկական է դառնում։ Քաղաքին էին մոտենում գերմանական և տաճկական բանդաները։ Հուլիսի 9-ի համարում թերթը տպագրում է Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետի՝ Անդրկովկասի ժողովուրդներին ուղղած կոչը, որը բոլորի ուշադրությունը հրավիրում էր լավ զինվելու վրա՝ թշնամուն մահացու հարված հասցնելու համար։ Թերթը հիշեցնում է բանվորներին, գյուղացիներին և զինվորներին, որ եթե նրանք չեն ուզում ստրկանալ, բանտերը նետվել ու գնդակահարվել, ապա խիզախ դիմադրություն պետք է ցույց տան թշնամուն, ջարդեն տաճկական-մուսավաթական բանդաներին և գերմանական ինտերվենտներին։

Թշնամու դիմադրությունը կոտրելու և նրան ջարդելու համար «Տեղեկատուն» անհրաժեշտ է համարում՝ ամուր պահել պրոլետարական ռևոլյուցիոն զգոնությունն ու կարգապահությունը, բարձր գիտակցությամբ մոտենալ խնդրի լուծմանը, չթերագնահատելով թշնամու ուժերը։

Այս առթիվ թերթը տպագրում է ռևոլյուցիոն գործիչ Արմենակ Բորյանի «Աշխատավորություն և հորհրդային իշխանություն», «Ապագան մերն է» և ուրիշ հոդվածներ, որոնք լույս են տեսնում թերթի հուլիսի 23-ի, 24-ի համարներում և արժեքավոր են թե՛ քաղաքական հարցերի նպատակասլաց բարձրացմամբ և թե՛ նյութը շարադրելու տեսակետից։

Այդ հոդվածների միջոցով թերթը մոբիլիզացնում է մասսաներին և առաջին հերթին կոմունիստներին՝ հակառևոլյուցիայի դեմ պայքարելու համար։ «Աշխատավորություն և հորհրդային իշխանություն» հոդվածում, օրինակ, թերթը նշում է, որ կոմունիստը չի կարող երկու տեսակետ ունենալ մոմենտի նկատմամբ. նա պետք է զենքը ձեռին պատերազմի ելնի թշնամու դեմ, որովհետև պատիվ չի բերում պարտվել և մնաս բարով ասել ռևոլյուցիային։ Հոդվածը մի մարտակոչ է բոլոր կոմունիստներին՝ դժվարություններից չվհատվելու, ռևոլյուցիայով նվաճված իրավունքները չզիջելու մասին։

Մարտական է «Ապագան մերն է» հոդվածը։ Հոդվածագիրը՝ Ա. Բորյանը, իր միտքը պատկերավոր դարձնելու համար դիմում է գեղարվեստական արտահայտչական միջոցների։

«Տեղեկատուում» մի շարք հոդվածներով հանդես են գալիս և՛ Ա. Կարինյանը, և՛ Ա. Շահգելդյանը, Դեորգ Թովմասյանը և ուրիշներ։ Նրանք բոլշևիկյան ճշմարտացի խոսքով մերկացնում են օտարերկրյա զավթիչներին, բացահայտում նրանց գիշատիչ պլանները և աշխատավորներին պայքարի կոչում նրանց դեմ։

Բաքվի ներքին և արտաքին թշնամիները գործում են միասնաբար։ Մենշևիկները, դաշնակները, մուսավաթականները ոչ մի ճիգ չեն խնայում իրենց տերերին հաճոյանալու համար։

Մի կողմից Տաճկաստանի զորքերի Բաքվին մոտենալը, մյուս կողմից հակառևոլյուցիոներների ձգտումը անգլիացիներին Բաքու հրավիրելու մասին ծայրահեղ դժվարացնում են կոմունայի վիճակը։ Հուլիսի 25-ի համարում «Տեղեկատուն» տպագրում է Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետի կոչը՝ վերահաս վտանգի մասին։ Այստեղ և նույն համարի «Բաքու, 23-ին հուլիսի» վերնագրով խմբագրականի մեջ թերթը դիմում է Բաքվի պրոլետարիատին, կոչ անելով չենթարկվել հակառևոլյուցիոներներին, չկատարել նրանց կարգադրությունները։

1918 թ. հուլիսի 25-ին տեղի է ունենում Բաքսովետի արտակարգ ընդլայնված նիստը, որտեղ սուր պայքար է տեղի ունենում անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցի շուրջը։ Այդ նիստում բոլշևիկները վճռական հարված են տալիս բոլոր նրանց, ովքեր պահանջում էին անգլիացիներին Բաքու հրավիրել։ Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը և մյուս բոլշևիկները բացահայտում են անգլիական զորքերի՝ Բաքու ներխուժելու բուն նպատակը։

Միանգամայն ճիշտ էր բոլշևիկների դիրքը։ Վ. Ի. Լենինը 1918 թ. հուլիսի 29-ին ասում է. «Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ որևէ համաձայնություն կնքելուց վճռականորեն հրաժարվելը Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է, քանի որ չի կարելի նրանց հրավիրել, առանց ինքնուրույն սոցիալիստական իշխանություն, թեկուզ և կարված տերիտորիայում, վերածելու իմպերիալիստական պատերազմի ասպարեզի»[1]։

Չնայած կոմունիստների գործադրած ջանքերին, այնուամենայնիվ, չնչին մեծամասնությամբ, անցնում է ռևոլյուցիայի թշնամիների՝ մենշևիկների, դաշնակների և աջ էսեռների բանաձևը՝ անգլիացիներին Բաքու հրավիրելու մասին։

«Տեղեկատուն» և բոլշևիկյան մյուս թերթերը ընդարձակ ինֆորմացիա են տպագրում Բաքսովետի հուլիսի 25-ի նիստի մասին։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 9։

Սովետական իշխանության թշնամիները պատրաստվում են տապալելու Բաքվի կոմունան։ Նրանք հատուկ պատվիրակություն են ուղարկում Իրան՝ անգլիական հրամանատարության շտաբը։

«Տեղեկատուն» շարունակում է նյութեր տպագրել այն մասին, որ տիրապետելով Բաքվին, անգլիական զավթիչները ստրկացնելու են տեղական բնակիչներին։ Հուլիսի 30-ի համարում հրապարակվում է Բաքվի սովետի գործադիր կոմիտեի դիմումը՝ բոլոր զորամասերին, նավաստիներին, բանվորներին՝ Բաքվի վրա շարժվող թշնամուն դիմադրելու մասին։

Քաղաքի բոլոր շրջաններում սկսվում են աշխատավորական ցույցեր՝ միասնական ճակատով թշնամուն հարվածելու համար։ Թերթը ծավալուն հաղորդագրություն է տպագրում հուլիսի 28-ին Մայիլյանների թատրոնում տեղի ունեցած ցույցի մասին, որտեղ ընդունված բանաձևում ասված էր «ոչ մի դեպքում թույլ չտալ անգլիացիներին մուտք գործելու Բաքու և սեփական ուժերով, մինչև վերջին կաթիլ արյունը կռվել գերմանա-տաճկական բանդաների և նրանց Լամակատար ռուսական անամոթ բուրժուազիայի և վերջիններիս կաշառած ագենտների՝ կեղծ սոցիալիստների դեմ, որոնք գործում են անգլիական իմպերիալիզմի և ռուսական բուրժուազիայի փողերով»։

Հուլիսի 30-ին թուրքական և մուսավաթական զորքերը կանգնում են քաղաքի շեմքին։ Հուլիսի 31-ին տեղի է ունենում Բաքվի սովետի արտակարգ նիստը, որտեղ ժողկոմսովետը ստիպված էր ցած դնել իր լիազորությունները։ Աջ էսեռները, մենշևիկները և դաշնակցականները հաջորդ օրը Բարվում կազմակերպում են «Ցենտրոկասպիայի և Սովետի Գործադիր Կոմիտեի ժամանակավոր նախագահության դիկտատուրա»։

Հակառևոլյուցիոն կառավարությունը փակում է Բաքվի բոլշևիկյան թերթերը, այդ թվում և «Տեղեկատուն», որի վերջին համարը՝ 84-ը լույս է տեսնում հուլիսի 31-ին։

«Տեղեկատու» թերթը միանգամայն ճիշտ դիրքերից է արտացոլում իրական պատկերը կոմունայի օրերին։ Նա ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Բաքվում Սովետական իշխանության ծանր օրերը, բոլշևիկների մղած համառ պայքարը հակառևոլյուցիայի դեմ։

«Տեղեկատու» թերթում լայն տեղ են գրավում ոչ միայն պրակտիկ նյութերը, հաղորդումները տարբեր գործարաններից, հանքավայրերից, շրջաններից, գյուղերից, պատերազմական գործողություններից, այլև տեսական շատ հոդվածներ՝ առանձին հարցերի շուրջը։ Մարքսիզմ-լենինիզմի առանձին դրույթների պարզաբանմանն են նվիրվում, օրինակ, թերթում տպագրված «Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և Հոկտեմբերյան հեղաշրջումը» (№ 5), «Իշխանության կազմակերպումը» (№ 6), «Պետությունը բուրժուազիայի և պրոլետարիատի համար» (№ 10)։ «Բուրժուական և պրոլետարական իշխանության ձևերը» (№ 11), «Ռուսական հեղափոխությունը և արևմտյան սոցիալիստները» (№ 16), «Մարքսիզմի դիկտատուրան» (№ 20) և ուրիշ հոդվածներ, որոնք այժմ էլ չեն կորցրել իրենց արժեքը։

Պետք է նշել, որ տեսական-հրապարակախոսական այս հոդվածների մի մեծ մասը «Կոմունիստ», «Կոմունար», «Ա», և այլ ստորագրություններով պատկանում են Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Անաստաս Միկոյանի գրչին։

«Տեղեկատուի» արժեքը, մասնավորապես մեծանում է նաև նրանով, որ այնտեղ պատշաճ ուշադրություն է դարձված նամակների հրապարակմանը։ Աշխատավորները տարբեր շրջաններից խմբագրությանն են գրում այն ամենի մասին, ինչ հուզում է իրենց։

Թերթը աշխատավորական մի շարք նամակներ է տպագրել նաև հակառևոլյուցիոներների, հատկապես դաշնակցականների քաղաքական հայացքների սնանկության մասին։ «Մենք և «ռեալիստ» դաշնակցականները», «Մեռնող կուսակցությունը», «Բավական է», «Մենք և մեր հակառակորդները» և այլ նամակներում մերկացված է դաշնակցականների դավաճանական գործունեությունը։

«...Թող դաշնակցությունը սգա իր համերգը, իսկ մենք, ընկերներ, եղբայրական ձեռք մեկնենք բոլոր բանվորներին ու գյուղացիներին առանց ազգի խտրության... ու բարձրաձայն գոչենք. կեցցե մեր հաղթությունը, կեցցե 3-րդ Ինտերնացիոնալը»,—գրում էր զաբրատցի բանվոր Արմենակը՝ «Մեռնող կուսակցությունը» նամակում։

Թերթում տպագրված առանձին նամակներ («Հարկավոր է վերջ տալ ծաղր ու ծանակին», «Գողություն հովանավորող համալսարանականները», «Գայլի հետ ուտող, չոբանի հետ հարայ տվողները», «Ջրի սպեկուլյացիա» և այլն) պատմում են բանվորական շրջաններում ծնունդ առած սոցիալիստական շահերի պաշտպանման գաղափարի ու գիտակցության մասին։

«Բանվորական նամակներ» բաժնում Բաքվի կոմունայի օրգանը տպագրում էր նյութեր միտինգների, ժողովների, դասախոսությունների ու զրույցների անցկացման մասին։

Թերթում տպագրված նամակները միաժամանակ վկայում են նրա խմբագրության անբակտելի կապերը աշխատավորական լայն խավերի հետ։

Բոլշևիկյան օրգանը հետևողական պայքար էր մղում հակառևոլյուցիոն մամուլի օրգանների դեմ, որոնք աղավաղված էին ներկայացնում իրական փաստերը և հերյուրանք տարածում բոլշևիկների ու Սովետական իշխանության հասցեին։ «Տեղեկատուի» անողոք քննադատությանն էին ենթարկվում առանձնապես «Հորիզոն», «Ակե», «Վպերյոդ» և դաշնակցական այլ թերթեր։

«Տեղեկատուն» մի շարք հոդվածներում (հատկապես «Ինչո՞ւ են դաշնակցականներին և էսեռներին դրկում Բաքվի Ժողկոմխորհրդում ներկայացուցչությունից», «Պաշտոնական դաշնակցություններ և վերջին դեպքերը», «Քաղաքական մուրացկաններ», «Անգլիական օրիենտացիայի հետ է փչում» և այլն) մինչև վերջ մերկացնում է դաշնակցականների կերպարանքը, նրանց նացիոնալիզմը, իրենց օտարերկրյա տերերին ծառայություն մատուցելու նրանց պատրաստակամությունը։

«Մամուլ» վերտառության տակ «Տեղեկատուում» նյութեր են տպագրվել նաև Բաքվում հրատարակվող կադետական և էսեռական մի շարք թերթերի («Բարու», «Կասպի», «Նաշ գոլոս» և այլն) հակասովետական ելույթների դեմ։

«Տեղեկատուն» տպագրում էր նաև գրական-գեղարվեստական նյութեր, բանաստեղծություններ։ Կոմունայի օրերին բանաստեղծություններով ավելի հաճախ հանդես են գալիս Գառնիկ Լազարյանը, Արմենակ Բորյանը, Խորեն Բորյանը (Լորենց) և ուրիշներ։

Գաղափարական բարձր արժեք են ներկայացնում Գ. Ղազարյանի «Հաղթանակ», «Մայիս», «Բանտարկյալներին», «Ըմբոստացում», «Իններորդ ալիք», «Փառք հաղթողներին» և այլ բանաստեղծությունները։ Հեղինակը իրեն կապված է զգում մասսայի հետ։ Նա համոզված է, որ բանվորները,

Ձուլում են գաղտնի մուրճը հաղթության,
Փշրելու անդարձ բռնության ոգին...։

«Դեպի գործարան» բանաստեղծության մեջ նա պատկերում է բանվորի տաժանակիր աշխատանքը, սոցիալական անարդարությունները, մերկացնում պրոլետարիատի թշնամիներին, որոնք ուտում-խմում են ուրիշի հաշվին։

Նկարագրելով ժողովրդի կսկիծն ու թախիծը, նրա ծանր վիճակը, հեղինակը, սակայն, չի վհատվում։ Նրա ոտանավորները համակված են լավատեսությամբ, ապագայի նկատմամբ վառ հավատով։

Գ. Ղազարյանը շատերի հետ լավ է գիտակցում, որ բանվորների պայքարը չի կորչի իզուր և կհաղթանակի՝ զոհողությունների գնով։ Այս միտքն է արտահայտում նրա «Հաղթանակ» բանաստեղծությունը.

Մեռնում են հեռվում կսկիծ ու թախիծ,
Կարմիր օրերի գարունն է փթթում,
Վառվում են անշեջ լույսերը անրիծ,
Վարդագույն կյանքի լույսերը ժպտուն...

Հերոսների, սոցիալիստական գործին նվիրված մարտիկների գովերգումն է արվում «Փառք հաղթողներին» բանաստեղծության մեջ։

Նույն գաղափարն է արծարծում Արմենակ Բորյանը «Մեծ ճամփին» ոտանավորում, իսկ «Քեզ ճանաչող չկա...» բանաստեղծության մեջ նա երգում է աշխատավոր մարդուն, նրա ամենակարող ուժը, խելքն ու հնարքը։

«Տեղեկատու» թերթի նշանակությունը դուրս է եկել ազգային սահմաններից և դառել ինտերնացիոնալ. այնտեղ բարձրացրած հարցերը վերաբերում են ոչ միայն հայ, այլև բոլոր ազգերի աշխատավորներին։

Կարդալով «Տեղեկատուի» համարները, ընթերցողը ցայտուն կերպով պատկերացնում է Բաքվի բոլշևիկների և աշխատավորական մասսաների այն պայքարը, որ մղում էին նրանք 1918 թ. ապրիլից մինչև օգոստոսի սկիզբը։ Ահա թե ինչու «Տեղեկատուն» ունի ճանաչողական լուրջ արժեք։ Այն հարուստ աղբյուր է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության այդ փառապանծ ժամանակաշրջանը ուսումնասիրելու համար։

Թերթի պատմությունը Բաքվի կոմունայի պատմությունն է, Ադրբեջանում սովետական կարգեր հաստատելու և ամրապնդելու համար մղված պայքարի պատմությունը։

ОРГАН БАКИНСКОЙ КОММУНЫ НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. Д. АВАКЯН

(Резюме)

В борьбе за создание и упрочение Бакинской коммуны достойный вклад внесла большевистская печать, особенно «Бакинский рабочий», «Гуммет», «Социал-демократ», «Известия Бакинского Совета», «Техекату» и другие газеты.

В настоящей статье кратко освещена лишь роль газеты «Техекату» («Известия»), выходившей на армянском языке.

Орган Бакинского Совета рабочих, солдатских и матросских депутатов «Техекату» издавался лишь несколько месяцев. Первый номер газеты вышел 16 апреля 1918 года, а последний — 31 июля. Опубликовано всего 84 номера.

Газета поддерживала тесную связь с редакциями газет «Известия Бакинского Совета» и «Бакы шурасы ахбари», которые, будучи органами Бакинского Совета, имели одинаковые задачи и цели.

В издании газеты «Техекату» активно участвовали члены редколлегии. Особенно большую работу вели Анастас Микоян и Овсеп Караханян. С ценными статьями на ее страницах выступали Ст. Шаумян, А. Микоян, А. Каринян, Г. Казарян, А. Борян, А. Шахгалдян, Г. Товмасян и другие.

«Техекату» широко пропагандировал социалистические мероприятия Бакинского новосозданного правительства — Совнаркома, публиковал его декреты, решения.

«Техекату» вел непримиримую и беспощадную борьбу с внутренними и внешними врагами революции. На его страницах часто публиковались материалы, разоблачавшие меньшевиков, дашнаков, мусаватистов.

Перелистывая номера газеты «Техекату», читатель, как на киноленте, видит борьбу бакинских большевиков и трудящихся масс с апреля до начала августа 1918 года. С этой точки зрения «Техекату» имеет большую познавательную ценность и может служить верным и ценным источником для тех, кто занимается исследованием истории большевистских организаций Закавказья.